

# ԱՊՐԻԼ 24-Ը ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

- Մայր, ո՞ր կ'երթաս:

- Այսօր Ապրիլ 24 է: Կ'երթամ Մելգոնեան, բարերարներուն, անոնց հետ խօսելու եւ զիրենք մխիթարելու:

- Ճամբան ուշադրութեամբ անցիր,- զի կը գոուշացնէ աղչիկս:

Փունջ մը ծաղիկ ձեռքս, գաւազանիս ընկերակցութեամբ կը քալեմ դէպի Մելգոնեան: Մուտքը չէ փոխուած: Պահակ չկայ: Բարձունքին վրայէն, բարերարներուն արձանները կ'իշխեն ամբողջ տարածութեան վրայ: Կը բարձրանամ գառիվերը եւ կը հասնիմ դամբան: Մունկի գալով, ծաղկեփունջը կը զետեղեն անոնց շիրիմին առջեւ: Կ'աղօթեմ սպա կը խօսիմ:

- Սիրելի եւ անգուգական բարերարներ, այս փունջ մը ծաղիկը ընդունեցէք որպէս երախտագիտական զգացում, ամուսինիս, եղբորս, երկու աղջիկներուս, երկու թոռնիկներուս եւ իմ կողմէ: Մենք, բոլորս, Ձեզի եւ Ձեր հիմնած այս Լուսոյ Տանարին կը պարտինք մեր ուսումը: Ինչ որ ենք այսօր, եղանք Ձեր շնորհի:



Մենք բարերարներ, այսօր Ապրիլ 24 է: Դուք շատ լաւ գիտէք անոր խորհուրդը: Մենք եղեռնէն ճողոպրած որբերուն հայրը եղաք: Հիմնելով այս հաստատութիւնը փրկեցիք անոնց կեանքը, տաքով երդիդի տակ անոնց ուսում տուիք, կեանքի յորձանքին պատրաստեցիք: Որբանոց մըն էր սկիզբը, շուտով դարձաւ երկրորդական վարժարան: Բազմաթիւ երկիրներէ հարիւրաւոր հայորդիներ եկան: Ձեր հիմնած Լուսոյ Անշէջ Վառարանին մէջ անոնց մտքերը լուսաւորուեցան, անոնց հոգիները ազնուացան: Իբրեւ ջահ՝ հայերէն լեզուի մետրոպէան տառերը իրենց հետ փոխադրեցին լուսաւորելու համար հայ համայնքներն ու դպրոցները: Դարձան ուսուցիչներ, բանաստեղծներ, գրողներ, գծագրիչներ, բժիշկներ, գիտնականներ...:

Այսօր ամայի կղզի մըն է Մելգոնեանը: Ձեր աչքերուն մէջ արցունք կը տեսնեմ, այո՛, դուք կու լաք: Կու լան բարերարներու սուրբ հոգիները անհունի մէջ, ի տես իրենց հիմնած հաստատութեան ներկայ վիճակին: Դուք լայնհառաջ կը կանչէք.

- Ո՞վ ձեզի իրաւունք տուաւ այս ուխտավայրը փակելու եւ վաճառելու:

Դժբախտաբար Ձեր կանչը չի հասնիր Ամերիկայ, նոյնիսկ եթէ հասնի, հոն բազկաթոռներու վրայ նստած, հայութենէ պարպուած մարդոց ականջները խլացած են, սիրտերը՝ քարացած: Անոնք անխղճօրէն ստորագրեցին բոլորիս սիրելի հաստատութեան մահավճիռը: Մեր պատանհները օտար դպրոցներու ծոցը նետեցին, ճերմակ ջարդին ախիւն ներարկեցին: Մելգոնեան Հաստատութիւնը Ռուբինոյ աչքին փուշն էր. վկայ՝ անոր ունեւորութիւնը մօտ երեսուն տարիներ առաջ:

Բոլոր մելգոնեանցիներս, շրջանաւարտ կամ թերաւարտ, յուզումով եւ արցունքոտ աչքերով կը ծայրնք Ձեր շիրիմին, երկու հսկայ շէնքերուն,

որոնք իրենց ուսանողներով, երգչախումբով, փողերախումբով, պարախումբով պարծանքն էին հայութեան, մանաւանդ կիպրահայութեան: Մելգոնեանի երգչախումբը հայ երգը ծանօթացուց օտարներուն Նիկոսիոյ եւ Լիմասոյի քրահներուն մէջ, թնդացնելով պատերն ու առաստաղները իր ոգեշունչ երգերով, իր «Մէզ Սիփանայ Սարի Վրայ» ռազմերգով:

Այսօր, ամայութիւն է ամէն կողմ, պուրակի ծառերը սուգի մէջ են, չեն շարժիր, չեն շջջեր: Թռչուններն ալ լուսած են: Տժգոյն ամպ մը պատած է Մելգոնեանը:

Կը քալեմ դամբանին շուրջ, բոլորակը նոյնպէս ամայացած է, հազիւ մի քանի ծաղիկներ, թուփեր կը շնչեն: Կը յառաջանամ, դիմացն են Ս. Մետրոպ Մաշտոցի, Կոմիտասի, Թէքէեանի, Քաջն Անդրանիկի եւ ուրիշներու կիսանդրիները, ոմանց անունները ջնջուած են, բայց դէմքերը՝ ծանօթ: Նստարաններէն մէկուն վրայ կը հանգչիմ ու կը դիտեմ լուսութեան մէջ կորսուած Մելգոնեանը:

Արցունքներու կաթիլները անձայն կ'իջնեն այտեւեւ վար, որուն կը հետեի հեկեկեանքը: Բարձրանալով կը զրուցեմ շրջապատին հետ, ծառերուն հետ, շէնքերուն հետ, բարերուն հետ, ամայութիւնը յաղթահարելու յոյսով: Բայց սփսուս, կեանքի խորհրդանիշ աղմկոտ Մելգոնեանը դարձեր է քար լուսութիւն, պարապութիւն:

Սիրելի բարերարներ, աշխարհով սփռուած Ձեր զաւակները, Սանոց Միութիւնները ընդվզեցան, միակամ ոտքի քալեմ, դէմ կեցան Մելգոնեանը վաճառքի հասանողներուն դէմ: Անոնց արդար պահանջատիրութեան միացաւ հայ մամուլը, զանազան կազմակերպութիւններ, հայ ժողովուրդը: Դրժբախտաբար, Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական վարչութիւնը մնաց անդրուելի իր որոշումին վրայ: Մխիթարական է սակայն, որ այժմ երկու շէնքերը եւ պուրակը անձեռնմխելի յայտարարած են՝ շնորհի կիպրահայոց առաջնորդ սրբազան հօր, պետական հայ ներկայացուցիչին, Սանոց Միութեան եւ քոյր միութիւններու համատեղ աշխատանքին:

Կը յուսամ եւ կը մաղթեմ, որ մեր սիրելի հաստատութիւնը վերաբանայ իր դռները, մեր զաւակներուն ու թոռներուն հայեցի դաստիարակութիւն ջասմէ, հայոց պատմութիւն սորվեցնելով զանոնք կապէ իրենց արմատներուն:

Յիշենք Վիքթոր Հիւկոյի գոհար խօսքերէն հետեւեալը.

«Ով որ դպրոց կը բանայ, գոցած կ'ըլլայ բանտ մը»

այսինքն՝

«Ով որ դպրոց կը գոցէ, բացած կ'ըլլայ բանտ մը»:

Ո՞ր կ'երթաս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն: